ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«01» ապրիլ 2021թ. No 1069 - Ա

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԿԱԶՄԸ ԵՎ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով, կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացում հնարավոր ճգնաժամային իրավիճակների հաղթահարման, արագ արձագանքման և անհրաժեշտ միջոցառումների համակարգված իրականացման նպատակով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Ստեղծել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացում հնարավոր ճգնաժամային իրավիճակի արագ արձագանքման հանձնաժողով:
2. Հաստատել՝

1) «Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացում հնարավոր ճգնաժամային իրավիճակի հաղթահարման միջոցառումների պլանը»՝ համաձայն հավելված 1-ի:

2) «Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացում հնարավոր ճգնաժամային իրավիճակի արագ արձագանքման հանձնաժողովի կազմը»՝ համաձայն հավելված 2-ի:

3. Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացում հնարավոր ճգնաժամային իրավիճակի արագ արձագանքման հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության իմունականխարգելման ազգային փորձագիտական խորհրդատվական խմբին՝

1) Իրազեկել հանրությանը Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացում հնարավոր ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ և պարբերաբար տրամադրել թարմացված տեղեկատվություն:

4. Առաջարկել «Էրեբունի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Հարություն Քուշկյանին (համաձայնությամբ), «Նատալի ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Աստղիկ» բժշկական կենտրոնի տնօրեն Ասատուր Ասատրյանին (համաձայնությամբ), Առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Սամվել Դանելյանին՝ ապահովել. ***(կետը խմբ. 21.02.22 N 717-Ա)***

1) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումից հետո հնարավոր հետպատվաստումային ծանր անբարեհաջող դեպքերի հոսպիտալացումը և պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը:

2) հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումից հետո հնարավոր հետպատվաստումային ծանր անբարեհաջող դեպքերի արտահիվանդանոցային հատուկ ու դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների իրականացումը՝ պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում: ***(ենթակետը լրացվել է 21.02.22 N 717-Ա)***

5. Առաջարկել մարզպետարանների գլխավոր քարտուղարներին, Երևանի քաղաքապետարանի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող

Դավիթ Համբարյանին, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին (համաձայնությամբ)՝ ապահովել.

1) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումից հետո հետպատվաստումային շրջանի դիտարկումները և հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի վարման ընթացակարգը՝ համաձայն Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 17-ի թիվ 21-Ն հրամանի պահանջների:

2) Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումից հետո հնարավոր հետպատվաստումային ծանր անբարեհաջող դեպքերի ուղեգրումը, հոսպիտալացումը և/կամ արտահիվանդանոցային հատուկ ու դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների իրականացման կազմակերպումը «Էրեբունի» բժշկական կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունում, «Նատալի ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Աստղիկ» բժշկական կենտրոնում և Առողջապահության նախարարության «Պրոֆ. Ռ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում՝ նախապես համաձայնեցնելով բժշկական կենտրոնների հետ: ***(կետը խմբ. 21.02.22 N 717-Ա)***

6. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ ապահովել.

1) Սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանին:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված 1
ՀՀ առողջապահության նախարարի
2021 թվականի ապրիլի 01-ի N 1069 - Ա հրամանի

ՊԼԱՆ
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ
ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ
ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառումներ	**Պատասխանատու կառույց**	**Իրականացման ժամկետ**
Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացում հնարավոր ճգնաժամային իրավիճակի արագ արձագանքման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամների պարբերաբար հանդիպումներ, ծանոթացում առկա խնդիրներին և հիմնական զեկուցողի որոշում՝ լրատվամիջոցներին և շահագրգիռներին արդյունավետ տեղեկատվության տրամադրման համար	Առողջապահության նախարարություն, Հանձնաժողով	Պարբերաբար, ճգնաժամային իրավիճակի արձանագրման դեպքում՝ 24 ժամվա ընթացքում
Առողջապահության նախարարության կողմից օպերատիվ իրազեկում ճգնաժամային իրավիճակի վերաբերյալ Հանձնաժողովին	Առողջապահության նախարարություն	Անմիջապես (ժամանակացույցը սահմանվում է ճգնաժամային իրավիճակի արձանագրման պահից հաշված)
Ճգնաժամային իրավիճակի ռիսկի մակարդակի գնահատում	Առողջապահության նախարարություն, Հանձնաժողով	24 ժամվա ընթացքում (ժամանակացույցը սահմանվում է ճգնաժամային իրավիճակի արձանագրման պահից հաշված)
Ճգնաժամային իրավիճակի արձանագրումից հետո կարճ հաղորդագրության տարածում դեպքի վերաբերյալ	Առողջապահության նախարարություն, Հանձնաժողով	24 ժամվա ընթացքում (ժամանակացույցը սահմանվում է ճգնաժամային իրավիճակի արձանագրման պահից հաշված)
Ճգնաժամի ընթացքում տեղեկությունների տրամադրման մեխանիզմի սահմանում (ով, երբ և	Առողջապահության նախարարություն, Հանձնաժողով	24 ժամվա ընթացքում (ժամանակացույցը սահմանվում է

ինչպես)		ճգնաժամային իրավիճակի արձանագրման պահից հաշված)
Տվյալ իրավիճակի համար հիմնական ուղերձների և հայտարարությունների, հաճախակի տրվող հարցերի, դրանց պատասխանների և հիմնական փաստարկների մշակում	«ՀՎԿ» ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ, Հանձնաժողով	24 ժամվա ընթացքում (ժամանակացույցը սահմանվում է ճգնաժամային իրավիճակի արձանագրման պահից հաշված)
ԶԼՄ-ների տվյալների գույքագրում և ցանկի պարբերաբար թարմացում	Առողջապահության նախարարություն	Մշտապես
Շահագրգիռ կառույցների անմիջական տեղեկատվական գործիքների ցանկի կազմում (կայք, սոցիալական ցանցեր, էլեկտրոնային փոստ, մամուլի հաղորդագրություն և այլն)՝ նրանց տեղեկատվություն տրամադրելու համար	Առողջապահության նախարարություն, Հանձնաժողով	Մշտապես
Հանրային արձագանքի մոնիթորինգի լայնածավալ իրականացում (օրինակ սոցիալական ցանցերի և/կամ թեժ գծի միջոցով)՝ անհապաղ արձագանքելու համար բոլոր նոր զարգացումներին, իրադարձություններին կամ ապատեղեկատվությանը:	Առողջապահության նախարարություն, «ՀՎԿ» ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ, Հանձնաժողով	Մշտապես

Հավելված 2
ՀՀ առողջապահության նախարարի
2021 թվականի ապրիլի 01 - ի N 1069 - Ա հրամանի

ԿԱԶՄ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ/Հ	Անուն, ազգանուն	Պաշտոն
1.	Արա Բաբլոյան	Արաբկիր բժշկական համալիր/Երեխաների և դեռահասների առողջության կենտրոնի գիտական ղեկավար (հանձնաժողովի նախագահ)
2.	Գայանե Սահակյան	Առողջապահության նախարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի տեղակալ, Իմունականխարգելման ազգային ծրագրի ղեկավար
3.	Աննա Չոբանյան	Իմունականխարգելման ազգային փորձագիտական խորհրդատվական հանձնաժողովի նախագահ, Երևանի քաղաքապետարանի «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի ինտենսիվ թերապիայի բաժանմունքի վարիչ
4.	Աննա Բալյան	Հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի գնահատման և հետաքննման հանրապետական հանձնաժողովի նախագահ, Երևանի պետական բժշկական համալսարանի թիվ 1 «Հերացի» հիվանդանոցային համալիրի գլխավոր բժշկի ամբուլատոր գծով տեղակալ
5.	Սարգիս Ղազարյան	ԱՆ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի «Քովիդ կլինիկայի» ղեկավար
6.	Մարինե Հովհաննիսյան	Երևանի պետական բժշկական համալսարանի Հանրային առողջության ֆակուլտետի դեկան
7.	Վարդուհի Պետրոսյան	Հայաստանի ամերիկյան համալսարանի Հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան
8.	Արման Բաղալյան	Երևանի պետական բժշկական համալսարանի համաճարակաբանության ամբիոնի ավագ դասախոս
9.	Նունե	ԱՆ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական

	Բաղդասարյան	կենտրոնի մանկաբուժական կլինիկայի ղեկավար
10.	Ղազարյան Լիլիթ	Առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ տնօրենի տեղակալ
11.	Տեր-Ստեփանյան Մերի	Երևանի պետական բժշկական համալսարանի համաճարակաբանության ամբիոնի դոցենտ
12.	Իրիցյան Սևան	ԵԴԱԻ «Արաբկիր» բժշկական համալիր երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի լաբորատոր ծառայության ղեկավար